

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ԱՆԿԱՆՆԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԵՆԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐՉԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», ««Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին, «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) ընդունումը նպատակ ունի.

1. Նվազեցնել կանխիկ դրամաշրջանառությունը

սահմանափակումներ են դրվել նաև կանխիկ միջոցների ծախսային և եկամտային մասերի վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանափակման պետք է ենթարկվեն հնարավոր խոշոր գործարքները: Ընդ որում՝ այդ սահմանափակումները կրում են աստիճանակարգային բնույթ: Մասնավորապես, Նախագծով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում անձանց միջև 2022 թվականի հունվարի 1-ից ապրանքների (գույքի) օտարման, ապրանքների (գույքի) օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում դրանց դիմաց վճարումը և վճարի ստացումը և այլ գործարքները իրականացվելու են անկանխիկ ձևով՝ աստիճանակարգված ձևով:

Ինչպես ծախսային, այնպես էլ եկամտային մասում կանխիկի վրա սահմանափակում սահմանելիս հաշվի է առնվել Երևան քաղաքի և մարզերի միջև ոչ համաչափ զարգացվածության հանգամանքը: Այդ պատճառով անկանխիկ վճարումների վերաբերյալ պահանջները դասակարգվել են ըստ վայրերի և սահմանվել են (Երևան, մարզկենտրոններ, այլ քաղաքային վայրեր) անկանխիկ վճարման պահանջի իրականացման տարբեր ժամկետներ:

2. Քաղաքացիների համար ստեղծել պայմաններ՝ անկանխիկ վճարումների իրականացման համար.

Նախագծերի փաթեթով նախատեսվել է խանութներում և սպասարկման այլ վայրերում վճարային գործիքներ (վճարային քարտ) ընդունող սարքերի տեղադրման դրույթներ: Առօրյա կյանքում հաճախորդների կողմից դժգոհություններ են արտահայտվում սպասարկման ոլորտում այդպիսի սարքերի բացակայության վերաբերյալ, ինչը բարդացնում է անկանխիկ վճարումների իրականացումը: Քաղաքացին ստիպված է վատնել ժամանակ և կրել մի շարք անհարմարություններ վճարային քարտից գումար կանխիկացնելու և որոշակի ապրանքի (ծառայության) դիմաց վճարում կատարելու համար, ինչով էլ մասամբ պայմանավորված է ՀՀ-ում քարտերով կանխիկացումների մեծ ծավալը: 2021 թվականի առաջին կիսամյակում վերջինս կազմել է ընդհանուր քարտային գործարքների 64.5%-ը (ՌԴ –ում 2021 թվականի առաջին կիսամյակի տվյալներով այն կազմել է 43.7%, Էստոնիայում՝ 30.6%):

3. Ուժեղացնել հարկային վարչարարությունը և պայքարել ստվերային տնտեսության դեմ: Անկանխիկ գործառնություններ իրականացնելիս դժվարանում է (գրեթե անհնար է) հարկային և մաքսային օրենսդրության պահանջներից խուսափելը:

Նախագծերի փաթեթում նախատեսվել է նաև անկանխիկ վճարման դեպքում ապրանքի, ծառայության դիմաց ավելի բարձր գին սահմանելը և (կամ) ավելի մեծ գումար ստանալը արգելող դրույթ:

Անկանխիկ վճարման մասին դրույթներ սահմանելիս փաթեթում հաշվի են առնվել ստվերային և դրանով պայմանավորված ռիսկեր պարունակող ոլորտները (բուժսպասարկում, կրթական ոլորտ և այլն), որտեղ կանխիկ սահմանափակումները կօգնեն հասնելու սահմանված նպատակներին:

4. Մեծացնել ֆինանսական միջնորդության ծավալները: Նախագծերի փաթեթի ընդունումը կբերի նաև բանկային համակարգում ֆինանսական միջնորդության ավելացմանը, որն իր հերթին կհանգեցնի ողջ ֆինանսական համակարգի զարգացմանը, այդ թվում՝ վճարային ծառայությունների մատուցման համար կիրառվող ենթակառուցվածքի և մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը՝ դրանով իսկ ապահովելով արագ, հուսալի և անվտանգ վճարման իրականացումը անկանխիկ գործիքների կիրառման միջոցով:

5. Հայաստանի Հանրապետությունում ձևավորել անկանխիկ վճարումներ իրականացնելու մշակույթ: Քաղաքացիների եկամուտների անկանխիկ ստացումը իր հերթին կնպաստի նրանց կողմից ծախսերի անկանխիկ եղանակով իրականացման սովորույթների ձևավորմանը: Օրենքի նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի միջազգային շուկայում շարունակաբար զարգացող, տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների/միջոցների (QR կոդեր, անհայում և այլ տեխնոլոգիաներ, ակնթարթային վճարումներ) տնտեսության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պետական վճարումների ոլորտում, ներդրման և բնակչության լայն խավերի կողմից կիրառման համար՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության որդեգրած՝ SS ոլորտի առաջատար մշակող և կիրառող երկիր ստանձնելու ստրատեգիկ նպատակին:

Նախագծերի փաթեթը մշակելիս ուսումնասիրվել է միջազգային փորձը, ըստ որի մի շարք առաջատար եվրոպական երկրներ օրենսդրորեն սահմանել են կանխիկ վճարումների սահմանափակման դրույթներ, այդ թվում Իտալիան, Ֆրանսիան, Իսպանիան և այլն (Տես Հավելված 1):

Ուսումնասիրվել է նաև ՀՀ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների պատրաստվածությունը օրենքի ներդրման արդյունքում ավելացված հաճախորդների զանգվածը սպասարկելու և համապատասխան ենթակառուցվածքներով ապահովված լինելու տեսանկյունից (Տես Աղյուսակ 1): ՀՀ բանկերը մասնաձյուղեր ունեն ոչ միայն մարզկենտրոններում, այլ նաև մարզերի այլ բնակավայրերում: ՀՀ 17 բանկերից 16-ը մատուցում են նաև հեռահար ծառայություններ (home banking, mobile banking), որոնց միջոցով հնարավորություն են ընձեռում հաճախորդներին առանց բանկ այցելելու կատարել մի շարք գործարքներ:

Վճարային տերմինալներով իրականացրած ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թվով 903 գյուղերից, որոնցից 406-ը ունեն 1000-ից ավել բնակչություն, միայն 63-ում է բացակայում վճարային տերմինալները:

Իրավաբանական անձանց կողմից կիրառվող ամենատարածված վճարային գործիքը վճարման հանձնարարականն է, և բանկերի կողմից հեռահար ծառայությունների մատուցման հնարավորությունը ապահովում է բանկային բոլոր ծառայությունների մատուցումը առանց բանկ այցելելու 24/7 ռեժիմով (1,000,000 և ավել հաճախորդ): Վճարման հանձնարարականով հեռահար ծառայություններից օգտվում են նաև ֆիզիկական անձինք: Մանրածախ առևտրի և սպասարկման ոլորտում վերջիններիս կողմից անկանխիկ վճարումներում հիմնականում կիրառվում են վճարային քարտերը: Քարտերի սպասարկումը ապահովելու համար բանկերը նույնպես զարգացնում են ՊՈՍ տերմինալների ենթակառուցվածքը: Վերջին տարիներին նկատվում է ՊՈՍ տերմինալների քանակի շարունակական աճ, մասնավորապես՝ վճարային քարտ սպասարկող ՊՈՍ տերմինալների քանակը 2021 թվականի առաջին կիսամյակում 2020 թվականի առաջին կիսամյակի համեմատ ավելացել է 34%-ով՝ կազմելով 16,535 հատ, իսկ վիրտուալ ՊՈՍ-երը աճել են 42%-ով՝ կազմելով 2,911 հատ: Օրենքի նախագծի ընդունումը կնպաստի ՀՀ-ում այդ ենթակառուցվածքների զարգացմանը և կխթանի վերջիններիս աճը:

30.06.2021թ. Դրությամբ ¹				
Տեղակայման վայրն ըստ մարզերի/ տարածաշրջանների	Ընդամենը սարքերի քանակ	Ավտոմատ գանձման մեքենաներ (ներառյալ ԲԱՍ)	Վճարումների ընդունման տերմինալներ	Բանկերի մասնաճյուղերի քանակ
Երևան	4,628	961	3,667	257
Արագածոտն	288	38	250	21
Արարատ	648	54	594	24
Արմավիր	685	60	625	23
Գեղարքունիք	355	44	311	27
Լոռի	464	61	403	36
Կոտայք	828	105	723	41
Շիրակ	530	73	457	38
Սյունիք	250	51	199	28
Վայոց Ձոր	90	23	67	10
Տավուշ	288	44	244	23
Ընդամենը	9,054	1,514	7,540	528

Առևտրի և սպասարկման կետերում ՊՈՍ տերմինալների տեղադրման կարևոր հարցերից է հանդիսանում առևտրի և սպասարկման կետերից սպասարկող (էկվայեր) բանկի կողմից գանձվող միջնորդավճարների չափը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ շուկայում ներկայումս առկա է միջնորդավճարների տարբերակում՝ ըստ վճարային համակարգերի և ըստ սպասարկվող ոլորտների: Մասնավորապես, Արքա քարտերի դեպքում սպառողների առօրյա կյանքի հետ կապված առևտրի և սպասարկման կետերի համար սահմանված է միջնորդավճարների ավելի ցածր շեմ: Առևտրի և սպասարկման կետերից 60 %-ից ավելիի համար Արքա քարտերի դեպքում գանձվող միջնորդավճարի միջին չափը տատանվում է 0.9-1.25%-ի սահմաններում, ինչը համադրելի է միջազգային պրակտիկայում կիրառվող միջնորդավճարների չափի հետ: Միջազգային վճարային քարտերով սպասարկման դեպքում (Վիզա, ՄաստերՔարտ) միջնորդավճարները մի փոքր բարձր են ի տարբերություն Արքա քարտերի, քանի որ միջազգային քարտերի դեպքում բանկերը կրում են հավելյալ ծախսեր կապված միջազգային համակարգին անդամակցության հետ (պարբերական և գործարքի հետ կապված ծախսեր): Պրեմիում դասի քարտերի դեպքում (Ամեքս) միջնորդավճարները բարձր են, ինչն ընդունված է նաև միջազգային պրակտիկայում, քանի որ պրեմիում դասի քարտերի դեպքում քարտատիրոջ համար մատուցվում են հարակից մի շարք ծառայություններ և տրամադրվում է արտոնությունների և գեղչերի համակարգ (պրեմիում դասի քարտերի տեսակարար կշիռը ՀՀ-ում չնչին է): Ինչ վերաբերում է միջնորդավճարների՝ ըստ ոլորտների տարբերակմանը, վերջիններս բարձր են սպառողների առօրյա կյանքի հետ չկապված ոլորտներում

¹ ԼՂՀ-ում տեղադրված սարքերի քանակը ներառված չէ:

(շահունով խաղեր և այլն), սակայն միևնույն ժամանակ սահմանված են ցածր տոկոսադրույքներ հանրության լայն խավերի կողմից օգտագործվող ոլորտներում (կոմունալ վճարումներ և այլն):

Կենտրոնական բանկը շարունակում է ուսումնասիրել ՀՀ բանկերի կողմից գանձվող միջնորդավճարների սահմանաչափերը և աշխատանքներ է իրականացնում դրանց օպտիմալացման ուղղությամբ:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ անկանխիկ գործառնությունների ծավալի աճին զուգընթաց կարող են ստեղծվել ավելի բարենպաստ պայմաններ միջնորդավճարները նվազեցնելու համար:

Հավելված

ԱՆԿԱՆՍԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԱՍՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Վճարումների ոլորտի ուսումնասիրության համաձայն², 2017 թվականին կատարված անկանխիկ գործարքների թիվը աշխարհում կազմել է 24 միլիարդ գործարք՝ 27,575 տրլն եվրո արժողությամբ, որտեղ առաջին տեղը զբաղեցնում է Միացյալ Թագավորությունը, երկրորդը՝ Գերմանիան և երրորդը՝ Ֆրանսիան, և այդ թիվը ունի աճի տենդենց: Անհրաժեշտ է նշել, որ անկանխիկ վճարումների զարգացումը մի շարք երկրներում իրականացվել է «բարի կամքով», այսինքն՝ առանց կանխիկ եղանակով վճարումների համար օրենսդրական սահմանափակումներ սահմանելու, և «պարտադրաբար» կիրառելով տարբեր ձևերի օրենսդրական սահմանափակումներ: Ստորև ներկայացված է մի շարք երկրների կարգավորման մոտեցումները:

Եվրոպական երկրներից՝ Իսլանդիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Ֆինլանդիայում, Սլովենիայում, Լիտվայում, Մալտայում Կիպրոսում և Շվեդիայում սահմանափակումներ բացակայում են:

Եվրոպական երկրներից այլ երկրներում գործում են կանխիկով վճարումների համար համեմատաբար խիստ սահմանափակումներ: Այսպես՝ օրինակ՝ Ղանիայում չկան սահմանափակումներ, բայց գործում է «համատեղ» պատասխանատվության սկզբունք, որոշակի գումարից բարձր ապրանքների համար կանխիկով վճարելու դեպքում: Վերջինս նշանակում է, որ գնորդը կրում է «համատեղ պատասխանատվություն» վաճառողի հետ, եթե վաճառողը չվճարի կանխիկով վաճառված ապրանքի ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ)՝ 10 000 DKK (մոտ՝ **1340 եվրո**) և ավել արժողությամբ ապրանքի համար: Եթե գնորդը չունի հնարավորություն վճարելու ապրանքի դիմաց անկանխիկ եղանակով, ապա ազատվում է «համատեղ պատասխանատվություն»-ից, եթե հարկային մարմիններին հայտնում է իր կողմից կանխիկով ձեռքբերվող ապրանքի մասին:

Բելգիայում 2014 թվականի հունվարից գործում է **3000 եվրոյի** սահմանափակում: Այն տարածվում է ոչ միայն ձեռքբերվող ապրանքների, այլ և մատուցվող ծառայությունների վրա, ինչպիսիք են՝ անշարժ գույքի գործակալների, ICT խորհրդատվական և այլ ծառայությունները: Նախկինում անշարժ գույքի միայն 10 % կարող էր վճարվել կանխիկով, իսկ 2014 թվականից կանխիկով վճարումը արգելված է ընդհանրապես: Նոտարները կան անշարժ գույքի գործակալները, ինչպես նաև այլ խմբի վաճառողները պարտավոր են տեղեկացնել կառավարությանը, եթե օրենքի պահանջները չեն պահպանվել: Տուգանքները որոշ դեպքերում կարող են կազմել 250 եվրոյից մինչև 225 հազ եվրո:

Ֆրանսիայում սահմանափակումը նույնպես կազմում է **3000 եվրո** ռեզիդենտ հարկատուների համար (ոչ ռեզիդենտ գնորդի համար 15 000 եվրո, ոչ ռեզիդենտ վաճառողի համար՝ 3000 եվրո): Քանի դեռ գործարքի գումարը ցածր է տվյալ սահմանափակումից վաճառողը կարող է ընդունել վճարը կանխիկ եղանակով (թղթադրամով և մետաղադրամով): Սպառողների միջև (օրինակ՝ ավտոմեքենայի ձեռքբերման) կատարված գործարքների դիմաց վճարումների համար չկան սահմանափակումներ, սակայն, եթե գործարքի գումարը չի գերազանցում 1500 եվրո, անհրաժեշտ է այն հիմնավորել վճարումը հավաստող փաստաթղթով:

Չեխիայում կանխիկով վճարումների սահմանափակումը կազմում է՝ օրական 350 000 կրոն (մոտ 14 000 եվրո):

Հունգարիայում սպառողների համար սահմանափակումներ չկան, միայն իրավաբանական անձանց համար գործում է՝ ամսական մինչև 1. 5 մլն ֆորինտի (մոտ 5000 եվրո) սահմանափակում:

Սլովակիայում կանխիկ եղանակով վճարումները սկսել են կարգավորել դեռևս 2013 թվականի հունվարի 1-ից՝ օրենքով սահմանված կարգով՝ B2B, C2B, B2C-մինչև 5000 եվրո¹:

² https://www.banque-france.fr/sites/default/files/media/2019/03/11/190227_-_en_national_cashless_payments_strategy_2019-2024.pdf

Պորտուգալիայում ցանկացած գործարք, որի գումարը գերազանցում է 1000 եվրո պետք է կատարվի անկանխիկ՝ վճարելով վաճառողի բանկային հաշվին, որպես վաճառողին նույնականացնող միջոց:

Իսպանիայում 2012 թվականի նոյեմբերի 19-ից կանխիկ միջոցներով վճարումների համար գործում է 2500 եվրո սահմանափակում ռեզիդենտների համար, և 15 000 եվրո՝ ոչ ռեզիդենտների: Տվյալ գումարը գերազանցող ցանկացած գործարք պետք է կատարվի անկանխիկ եղանակով: Ընդ որում՝ պահանջը չապահովելու դեպքում կարող է կիրառվել տուգանք՝ գործարքի մինչև 25 %:

Իտալիայում 2012 թվականի դեկտեմբերի 6-ից գործում է կանխիկով վճարումների սահմանափակում՝ մինչև 999,99 եվրո: Եվ 1000 եվրո և ավել գումարի գործարք կատարելու համար անհրաժեշտ է կիրառել անկանխիկ գործիքներ՝ դեբետային կամ վարկային քարտեր, հասարակ մուրհակներ կամ բանկային փոխանցում: Տուգանքը տվյալ սահմանափակման պահանջը շրջանցելու դեպքում կարող է կազմել 3000 եվրոյից մինչև գործարքի 40%-ը: 2014 թվականի հունվարի 1-ից վարձակալության ցանկացած վճար, այդ թվում՝ հանգստյան տների համար ենթակա է վճարման բացառապես անկանխիկ եղանակով:

Քուրդարիայում սահմանափակումը կանխիկով վճարումների համար մինչև 10 000 լև է (մոտ 5112 եվրո): Եթե գործարքի գումարը գերազանցում է այդ գումարը՝ վճարողը պարտավոր է վճարումը կատարել անկանխիկ եղանակով, անգամ եթե վճարումը կատարվում է մաս-մաս:

Հունաստանում գործում է մինչև 1500 եվրո կանխիկով վճարելու սահմանափակում, որը գերազանցող ցանկացած գործարք կատարելիս անհրաժեշտ է կիրառել բանկային հաշիվներ և վճարային քարտեր: Իսկ 2015 թվականից ներդրվեց պարտադիր պահանջ՝ իրավաբանական անձ հանդիսացող վաճառակետերում կատարվող վճարումները վճարային քարտերով ընդունելու:

Այնպիսի երակներում, ինչպիսիք են Բելգիան և Ֆրանսիան օրենսդրական սահմանափակումները կանխիկ միջոցներով վճարումներ իրականացնելու համար սկսել են կիրառվել 2008 թվականի գլոբալ ձգնաժամից անմիջապես հետո:

Անկանխիկ վճարումների զարգացման ուղղությամբ հաջողված փորձ ունեցող երկրների ցանկում կարելի է նշել նաև՝ Հնդկաստանը (2016), Մեքսիկան, Ուրուգվայը (2017), Մալագիան, Հարավային Կորեան (2001), Արգենտինան (2017), Վիետնամում և Ղազախստանը (2014), որտեղ կատարված օրենսդրական սահմանափակումների միջոցով հնարավոր եղավ ավելացնել պետական բյուջե ուղղված միջոցները:

ⁱ Predpis č. 394/2012 Z. z. Zákon o obmedzení platieb v hotovosti / Zákoný pre l'udí (<http://www.zakonypreludi.sk/z/2012-394>).